

Կը հընչէին,
Տըռփ տըռփ, կաթիլ կաթիլ,
Անեկրային,
Ձանգակները Սուրբ Յակոբին,
Բանալու նոր բարիքներով
Ճամբան արեւ,
Ուրախութեան եւ արիւնի
Մեծ խորհուրդին:

◆◆◆

Ա.կեղդամա՛
Հընձանին մէջ արիւններուդ,
Ծոցն ալօսին քու հողերուդ,
Հայ արիւնին
Կոթեր են միշտ շիրտ մաքուր,
Եւ ու հիմա,

Հողերուն մէջ քու արիւնոս
Ու սըրբազան,
Կ'իյնան ահա,
Իբրեւ արիւն իբրեւ նըշխար,
Խորհուրդին դէմ զոհողութեան
Ողջ հայութեան:

Ա.կեղդամա՛
Իցիւ թէ ա՛հ
Արիւնն անհուն
Ժողովուրդիս տառապահար,
Խաղաղութեան բանար իր թել,
Փոթորկին դէմ այս անսահման,
Կրակներուն՝ երկրակործան,
Մաքամաքուր
Ձերք ծիածան:

ԵՂԻՎԱՐԴ

Խ Ո Ր Ի Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Պիտի դառնան օրերն այսպէս կըծկելով թելը մեր կեանքին,
Պիտի խոցուինք միշտ պատրանքէն, ապաւինինք յոյսին կըրկին,
Մինչեւ օր մը, մօ՞տ թէ հեռու, մերին արեւն ալ խաւարի,
Ու մեր սըրտին կըրակը բորբ չըլագեցած մինչեւ մարի:

Մեզմէ յետոյ հազար ձեռով կեանքը պիտի ծաղկի նորէն,
Մարդիկ պիտի խընդան ու լան եւ անցնին հոյն համբաներէն,
Փռի դառնայ երբ սիրը մեր, սա արեւը բարի ու պերճ
Իր կըրակը պիտի թափէ ուրիշներու սըրտերուն մէջ,

Որ նոր սէրեր ու նոր իղձեր ու նոր երգեր հիսուին նորէն
Ու ուրիշներ, իրենց կարգին, իրենց երազը օրօրէն...
Յետոյ մեզպէս անցնին խաբուած, բայց աւխարհէն այս անյագուրդ...
Ազօթ, անէծք իրար խառնած, կեանքը մընայ խորին խորհուրդ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

